68. ԴԱԼՈՒ ԴԸԺԸՔՈՆ

Մարդըմ կէղնի, էն խըդար վախկոտ կէղնի, օր ճրագ կկպեր, էլ չիշխըներ հ'էլներ դուրս։

Ավուրըմ մեկ լէ, իմալ կէղնի, ճանճեր կիգան կնստին վըր էդ մարդու ճակտին։ Ձեռք կզարկե ճակտին, յոթ հատ ճանճ կըսպանե։

Կասե.—Վալայ՛ի, իմ պես կտրիճ մարդ աշխըրքի մեջ չկա, ես պիտի հ'էլնեմ էրթամ թուղթ էնող տերտերու իսչ, իտամ թուղթըմ էնե իմ էզան, էձգիմ վիզ ու հեծնիմ էրթամ օլըրդիմ։

Կհ'էլնի, կէրթա, կասե.—Տերտե՛ր, իմ անուն Դալու Դըժըքո է։ Մեկ դրբեն, մեկ ձեռքով յոթ մարդ կսպանիմ, թուղթըմ էրե, կախիմ իմ էզան վզեն, հեծնիմ էրթամ օլըրդիմ։

Տերտերն է, կբերե թուղթըմ կգրե, թե «էդա Դալու Դըժըքոն է, մեկ դրբով, մեկ ձեռքով յոթ մարդ կսպանե»։

Դըժըքոն կառնե զէդ թուղթ, կզարկե ուր էզան ճակատ ու կհեծնի կէրթա, կօլըրդի։

Կէրթա, կէրթա թագավորի նստած քախքին կմոտենա, կիգա առվըտնոցիմ՝ հրռաստ, զուր եղ կթորկե առվըտնոցի մեջ կարծե, ինք լէ կթալե զուր գլուխ, կպառկի քնի։ Էդ հ'արտ լէ թագավորի տղեկներուն կէղնի, փանջարից կտեսնան օր մարգում՝ մեկ էկեր

է, զուր եղ թորկի ուրանց առվրտնոցի մեջ ու ինք լէ պառկեր է քնի։

Պզտիկ ախպոր կասին.—Հ'էլի, գնա տես էդա ո՞րն է էկեր է պառկի մըր հ'արտի պռուկ քնի ու զեզ լէ թորկե մըջ առվրտնոցին. կարծե, գնա, հանե ու դառձի էկո։

Պըղտիկ ախպերն կէլնի կիգա, կտեսնա օր սպիտակ եզըմ թուղթըմ լէ զարկուկ է ճակատ, վրեն գրուկ է, թե «Ես Դալու Դրժրքոն եմ, մեկ ձեռքով յոթ մարդ կսպանեմ», թողուկ է մըջ հ'արտին։

Վախեցավ, չիշխցավ օր եզ լէ հաներ առվրտնոցի միջեն։

Դարցավ էկավ ախպըրտոց ասեց.—Ախպըրտա՜նք, գացի օր զէդ եզ հանեք մըր առվրտի միջեն, տեսա օր մարդըմ պառկուկ է առվրտնոցի պըռուկ, թուղթըմ լէ կա զարկուկ վըր էզան ճակտին, գրուկ է, թե. «Էդա Դալու Դրժրքոն է, մեկ ձեռքով յոթ մարդ կըսպանե»։

Ախպըրտանք լէ վախեցան, ասին.—Հ'էլնենք էրթանք էդ մարդու հ'առեջ, իքրամ էնինք, բերինք մըր տուն, մզիկ պետք կիգա։

Հ'էլան հեծան զուրանց ձիանք, ձիմ' լէ առան Դրժրքոյին, էկան հ'իմցուցին, հեսցուցին ու առան գացին։

Տես օր պատիվ ու իքրամ կէնին Դալու Դրժրքոյին. մանցին հըր հ'իրկուն, ախպըրտանք ասին.—Ի՞նչ իտանք էդ մարդուն փեշքեշ։

Պղտիկ ախպերն ասեց.—Ախպըրտանք, բերեք զմըր քուր իտանք էդա մարդուն։

Ախպըրտանք ասին.—Վալա՜յի, մըր պզտիկ ախպեր աղեկ ասեց։

Էդ քուրոջ սապրպուն լէ թագավորըմ կեր, էկեր էր վըր էդոնց կռիվ, յոթ ամիս կէներ օր կանուկ են հ'իրարու դեմ, նը՜ էնի ալթ կէղներ, նը՜ էնի։

Քանիմ' օր ըռհաթան, ձիմ' բերին տվին Դրժրքոյին ու հ'էլան հեծան հ'իրարու հետ, կէրթեն կռվու մեջ, զաթի ձեն գացեր հասեր էր դուշմընին։ «Ջասի՞ս՝ թագավորի տղեկներուն իմդադըմ էկեր է, մեկ ձեռքով յոթ մարդ կսպանե»։ Վախ առեր էր զուրանք։

Օր հ'էլան գացին, Դրժրքոն հ'ըմն օր ձի՞ էր հեծի, ձիմ' տված են Դրժրքոին՝ ամպերու հետ կխաղար։ Իմալ էղավ, խրոդաց, զգըլուխ առավ Դրժրքոյից։ Դրժրքոն գնաց ծստում՝ տրկեն կընցներ,

ասեց. «Կանի՞ չէղավ բոնիմ զէդա ծառու ճղեր, կախվրկիմ, ձին թըղ էրթա»։

Զձեռք օր թալեց. ծառու ճղեր, դու մ՚ասի. ծառ լէ փրտոտ էր, փըրցան ծառ ու էկան։ Ձին թե օր հ՚առաջ մեկ կփախներ, ծառու պըթրոտուն օր առավ, էղավ էրկու։ Ծառ մնաց Դրժրքոյի ձեռք ու ձին գնաց հ՚ընկավ օրդվի մեջ, զէն էն դին կկոխրոճեր, զէն էն դին կկոխրոճեր։ Ընցավ զթագավորի տզի օրդուն, գնաց ընկավ դուշմնի օրդուի մեջ։ Զէդ օր տեսան, ասին՝ փախնինք օր ազատինք։

Դալու Դրժրքոն օր տեսավ դուշման կփախնի, սիրտ առավ ու հ՚ընկավ հետև ուրանց, տարավ հասուց ուրանց հող, նոր դարձավ էկավ։

Թագավորի տղեկներ վերցուցին զուրանց օրդուն ու դարձան էկան ուրանց տուն։

Բերին զուրանց քուր տվին Դալու Դրժրքոյին։ Հ՚էլավ առավ զուր կնիկ ու դարցավ էկավ ուր տուն։